Լրամշակված տարբերակ
27.01.09թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 1991 թվականի հունիսի 17-ի Հ.Ն-0333-1 օրենքի (այսուհետ՝ օրենք) նախաբանը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է խղճի և կրոնի ազատությունը և ապահովում է յուրաքանչյուրի իրավունքի իրացումը: Այս իրավունքը ներառում է կրոն, դավանանք կամ համոզմունքներ ընդունելու, չընդունելու կամ փոխելու ազատությունը եւ դրանք քարոզի, եկեղեցական արարողությունների եւ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու իրավունքը՝ միայնակ և (կամ) այլոց հետ (համատեղ, միավորվելով):

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8.1 հոդվածի, կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-րդ հոդվածով՝

«Հոդված 1.1. Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, բնագավառը կարգավորող օրենքներից և իրավական այլ ակտերից»:

Հոդված 4. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առջև՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելիությունից:

Կրոնի, դավանանքի կամ հոգևոր համոզմունքի նկատմամբ անձի իրավունքների սահմանափակումները (բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերի), կրոնական հիմքի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, ինչպես նաև կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն»:

Հոդված 5. Օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Խղճի և կրոնի ազատության իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով« եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության« բարոյականության կամ հասարակության մյուս անդամների իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար: »

Հոդված 6. Օրենքի 4-րդ հոդվածի երկրորդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածի՝

ա) առաջին մասի «ե» կետում «200» թիվը փոխարինել «500» թվով.

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ»կետ՝

«զ) քրիստոնեական դավանանքի դեպքում՝ դավանում են Հիսուս Քրիստոսին որպես Աստված և Փրկիչ և ընդունում են Սուրբ Երրորդությունը»:

Հոդված 8. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը «առաքելական» բառից հետո լրացնել «սուրբ» բառով։

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է հոգեորսությունը։

Հոգեորսություն է համարվում այլ կրոնական կամ դավանաբանական հայացքներ ունեցող կամ դրանք չունեցող քաղաքացիների նկատմամբ այն քարոզչական ներգործությունը, որի ընթացքում՝

ա) առաջարկվում կամ տրամադրվում է նյութական խրախուսանք,

բ) գործադրվում է ֆիզիկական կամ հոգեբանական ճնշում կամ հարկադրանք,

գ) ձևավորվում է ատելություն այլ կրոնական կազմակերպությունների, նրանց դավանանքի և գործունեության նկատմամբ,

դ) կիրառվում է այլ անձանց կամ կրոնի նկատմամբ վիրավորանքների արտահայտում։

զ) անձը կրկնակի և ավելի անգամ հետապնդվում է իր բնակարանում, աշխատավայրում, հանգստի կամ այլ վայրերում, ինչպես նաև հեռախոսազրույցով՝ առանց իր ցանկության կամ խնդրանքի։

Հոդված 10. Օրեքնի 10-րդ հոդվածը «առաքելական» բառից հետո լրացնել «սուրբ» բառով։

Հոդված 11. Օրեքնի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«Արգելվում է առանց օրենքով սահմանված կարգով գրանցված և գործող տվյալ կրոնական կազմակերպության համաձայնության կրոնական խորհրդաբանության, կրոնական շինությունների (անկախ սեփականության ձևից) պատկերների և անվանումների, սրբերի անունների և պատկերների օգտագործումը ապրանքային և սպասարկման նիշերում, ֆիրմային անվանումներում կամ նշաններում, գովազդում,

բացառությամբ՝ սոցիալական գովազդի։ Այդ հարաբերությունները կարող են կարգավորվել պայմանագրային հիմունքներով։

Սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները չեն տարածվում ֆիզիկական անձանց գեղարվեստական ստեղծագործությունների և դրանց նկատմամբ հեղինակային իրավունք ունեցող օբյեկտների նկատմամբ։»։

Հոդված 12. Օրենքի 14-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի «համայնքը կամ» բառերը հանել, իսկ « «բ»-«ե» ենթակետերով» բառերը փոխարինել «առաջին մասում, բացառությամբ՝ «ա» կետում» բառերով.

գ) 2-րդ մասի «տաս» բառը փոխարինել «երեսուն» բառով։

Հոդված 13. Օրենքի 17-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի «բ» և «գ» կետերի վերջում լրացնել « , բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի։» բառերը։

բ) 2-րդ և 3-րդ մասերում «Հայաստանյաց Առաքելական եկեղեցու» բառերը կամ դրա հոլովաձևերը շարադրել «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու» բառերով կամ դրա հոլովաձևով։

Հոդված 14. Օրենքի 18-րդ հոդվածը «Պետությունը» բառից հետո լրացնել «, բացի օրենքով սահմանված դեպքերի, » բառերով։

Հոդված 15. Օրենքի 19-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է այն կրոնական կազմակերպությունների գործունեությունը, որոնք իրենց գործունեության ընթացքում իրականացնում են կամ փորձում են իրականացնել անդամների անձնական կյանքի, տեղեկացվածության, առողջության և սեփականության վերահսկողություն»։

Հոդված 16. Օրենքի 23-րդ հոդվածի՝

ա) կետում «գրանցում է կրոնական կազմակերպությունների կանոնադրությունները» բառերը փոխարինել «սույն օրենքի 14-րդ հոդվածի համապատասխան տալիս է փորձագիտական եզրակացություն» բառերով.

բ) 23-րդ հոդվածի երկրորդ մասը ուժը կորցրած ճանաչել։

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից։

Հոդված 18. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո գրանցված և **իրենց գործունեությամբ սույն օրենքի դրույթներին չհամապատասխանող** կրոնական կազմակերպությունները **երեք ամսվա ընթացքում վերագրանցվում են** և իրենց գործունեությունը համապատասխանեցնում սույն օրենքի դրույթներին։

Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերում և ժամկետներում չվերագրանցված կրոնական կազմակերպությունների գործունեությունը դադարում է, եթե օրենքով այլ բան սահմանված չէ։

նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 4-ի ՀՕ-528 քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 162-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 162. Անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելը, ղեկավարելը կամ նրանց աջակցելը, հոգեորսությամբ զբաղվելը

1. Այնպիսի կրոնական կամ հասարակական միավորում կազմելը, ղեկավարելը կամ նրանց աջակցելը, որի գործունեությունը զուգորդված է անձանց առողջությանը վնաս պատճառելով կամ անձանց այլ իրավունքների դեմ ոտնձգություններով, ինչպես նաեւ անձանց իրենց քաղաքացիական պարտականություններից հրաժարվելուն դրդելով՝

պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով։

2. Հոգեորսությամբ զբաղվելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող չորրորդ ամսից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների ընդունման վերաբերյալ

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ընդունվել է 1991 թվականին Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից: Թեպետ երկու անգամ (1997 և 2001) ՀՀ Ազգային Ժողովի կողմից այն ենթարկվել է փոփոխությունների և լրացումների, գործող օրենքում պահպանվել են թե բովանդակային, թե խմբագրական թերություններ:

Խմբագրական շտկումների անհրաժեշտությունը ծագել է օրենքի ընդունման պահից առ այսօր Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության, նախևառաջ՝ ՀՀ Սահմանադրության ընդունման հետևանքով:

Բովանդակային փոփոխությունների կարևորությունը առավել է ընդգծվում գործող օրենքում տեղ գտած մի շարք բացթողումների պատճառով: Ի մասնավորի, հստակեցված չէ «հոգեորսություն» հասկացությունը, վերանայման ենթակա է կրոնական կազմակերպության անդամների նվազագույն քանակական շեմը, մատնանշված չեն կրոնական կազմակերպությունների քայքայիչ և ամբողջատիրական գործունեության բնութագրիչները և այլն: Նշված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկները հիմնված են միջազգային իրավունքի և փորձի վրա:

Առաջարկվող այս փոփոխություններին ու լրացումներին զուգահեռ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է սահմանել քրեական պատիժ անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող

միավորումներ կազմելու, ղեկավարելու կամ նրանց աշխատանքներին աջակցելու և հոգեորսությամբ զբաղվելու համար

Այն կարծիքին ենք, որ ներկայացված նախագծերը հարմար հիմք և առիթ կարող են հանդիսանալ Ազգային Ժողովում հոգևոր-կրոնական ոլորտի օրենսդրության վաղուց հասունացած արդիականացման և բարեփոխման համար, այդ թվում՝ ազգային անվտանգության դիտանկյունից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտություն չի առաջանում։

Տեղեկանք

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ

Ղեկավարվելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրով, նկատի ունենալով հայ ժողովրդի հոգեւոր զարթոնքը, նրա դարավոր հոգեւոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգեւոր կյանքի շինության ու ազգապահպանման կարեւոր պատվար, առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների սկզբունքներով եւ հավատարիմ լինելով քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18 հոդվածի դրույթներին, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունում է սույն օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպության մասին։

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի եւ կրոնական դավանանքի ազատությունը։ Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր։

ՀՈԴՎԱԾ 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները օրենքի առջեւ հավասար են քաղաքացիական, քաղաքական, հասարակական, տնտեսական եւ մշակութային կյանքի բոլոր բնագավառներում՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից։

Դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, կրոնական հողի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն։

ՀՈԴՎԱԾ 3. Քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որեւէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին եւ արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս։

Խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լոկ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը եւ կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունը եւ բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար։

ՀՈԴՎԱԾ 4. Կրոնական կազմակերպությունը հավատի համատեղ դավանության, ինչպես նաեւ կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված քաղաքացիների միավորում է։

Կրոնական կազմակերպություններ են՝ եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրատարակչական հաստատությունները եւ այլ կրոնական-եկեղեցական հիմնարկներ։

ՀՈԴՎԱԾ 5.

Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն, եթե այն բավարարում է հետեւյալ պայմաններին.

ա) չի հակասում սույն օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին.

բ) հիմնվում է պատմականորեն կանոնացված որեւէ սուրբ գրքի վրա.

գ) իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ.

դ) զերծ է նյութապաշտությունից եւ ուղղված է դեպի հոգեւոր ոլորտները.

ե) ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ: Մինչեւ 18 տարեկան երեխաները չեն կարող անդամագրվել կրոնական կազմակերպությանը՝ անկախ կրոնական ծեսերին իրենց մասնակցելու պարագայից եւ այլ հանգամանքներից:

Սույն պայմանները (բացի ,,ա,, կետում նշվածից) պարտադիր չեն միայն ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպությունների համար՝ իրենց ազգային դավանանքով:

ՀՈԴՎԱԾ 6.Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են.

Հայաստանյաց Առաքելական եկեղեցին (կրճատ՝ Հայ եկեղեցի) իր ավանդական կազմակերպություններով.

կրոնական այլ կազմակերպություններ, որոնք ստեղծվում եւ գործում են իրենց հավատացյալ անդամների շրջանակում՝ սեփական ունեցվածքի ու կանոնադրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է հոգեւորսությունը: Որպես հոգեւորսություն չի կարող դիտվել սույն օրենքի 7 հոդվածում նշված իրավասությունների սահմանում ծավալված որեւէ գործողություն:

ՀՈԴՎԱԾ 10. Հայաստանյաց Առաքելական եկեղեցին եւ կրոնական այլ կազմակերպությունների պատմական հուշարձանները եւ պաշտամունքային գույքը օգտագործվում են համաձայն այդ կազմակերպությունների նվիրագործված ավանդական կարգի:

ՀՈԴՎԱԾ 11. Կրոնական կազմակերպությունները պարտավոր են ապահովել պետության կողմից որպես սեփականություն իրենց հանձնված կառույցների, տարածքների եւ մյուս ունեցվածքի, ինչպես նաեւ իրենց սեփականություն հանդիսացող պատմական հուշարձանների պահպանությունը եւ ըստ նշանակության օգտագործումը:

ՀՈԴՎԱԾ 14. Կրոնական համայնքը կամ կազմակերպությունն իրավաբանական անձ է ճանաչվում պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից: Կրոնական կազմակերպությունը գրանցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին իրավաբանական անձանց պետական ռեգիստր պետք է ներկայացվի կրոնի գործերով պետական լիազորված մարմնի փորձագիտական եզրակացությունը՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի "բ"-"ե" ենթակետերով սահմանված պայմանների վերաբերյալ: Փորձագիտական եզրակացություն ստանալու համար կրոնական կազմակերպությունը պետք է ներկայացնի սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված պայմանները հավաստող փաստաթղթեր:

Փորձագիտական եզրակացությունը դիմողին տրվում է դիմելու օրվանից ոչ ուշ, քան տաս օրվա ընթացքում: Փորձագիտական եզրակացության ձեւը սահմանում է կրոնի գործերով պետական լիազորված մարմինը:

ՀՈԴՎԱԾ 17.Հայաստանի Հանրապետության եկեղեցին անջատված է պետությունից: Սույն հիմնադրույթի համաձայն պետությունը՝

ա) իրավունք չունի քաղաքացուն հարկադրել դավանելու այս կամ այն կրոնը.

բ) չի միջամտում եկեղեցու եւ կրոնական կազմակերպությունների՝ օրենքին համապատասխանող գործունեությանը եւ ներքին կյանքին, արգելում է եկեղեցիների եւ կրոնական կազմակերպությունների կառուցվածքում որեւէ պետական մարմնի կամ նրա հանձնարարությունները կատարող անձի գործունեություն.

գ) արգելում է եկեղեցու մասնակցությունը պետական կառավարմանը, եկեղեցու եւ կրոնական կազմակերպությունների վրա չի դնում որեւէ պետական ֆունկցիա:

Պետությունը չի խոչընդոտում ազգային եկեղեցու մենաշնորհ հանդիսացող հետեւյալ առաքելությունների իրագործմանը.

- ազատ քարոզել ու տարածել իր դավանանքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հայաստանյաց Առաքելական եկեղեցու դավանաբանության պաշտոնական լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով կամ զանգվածային միջոցառումների ժամանակ կարող է իրականացվել միայն Հայաստանյաց Առաքելական
եկեղեցու հավանությամբ.
- վերստեղծել իր պատմական ավանդույթները, կառուցվածքը, կազմակերպությունները, թեմերն ու համայնքները.
- կառուցել նոր եկեղեցիներ, գործող դարձնել իրեն պատկանող պատմական հուշարձան-եկեղեցիները՝ ինչպես հավատացյալների խնդրանքով, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ.
- նպաստել հայ ժողովրդի հոգեւոր կրթությանը, օրենքով սահմանված կարգով նաեւ պետական կրթական հաստատություններում.
- գործնականորեն աջակցել հայ ժողովրդի բարոյական կատարելագործմանը.
- ծավալել բարեգործական եւ բարեխնամ գործունեություն.
- ունենալ մշտական հոգեւոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, զառամյալների եւ հաշմանդամների տներում, զորամասերում, ազատազրկման վայրերում՝ ներառյալ քննչական մեկուսարանները:

Միեւնույն ժամանակ Հայաստանյաց Առաքելական եկեղեցին որպես ազգային եկեղեցի, որը գործում է նաեւ հանրապետության տարածքից դուրս, ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը՝ միջազգային իրավական նորմերի սահմաններում:

Ազգային տաղավար տոներին հաջորդող աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է տեղափոխվել նախորդ կամ հաջորդ շաբաթ օրը:

ՀՈԴՎԱԾ 18.Պետությունը չի ֆինանսավորում ինչպես կրոնական կազմակերպությունների գործունեությունը, այնպես էլ աթեիզմի քարոզչությունը, միեւնույն ժամանակ կրոնական կազմակերպությունների անդամներին ու սպասավորներին վերապահում է հասարակական ու քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք՝ այլ քաղաքացիների հետ համահավասար:

ՀՈԴՎԱԾ 19. Գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր քաղաքացիական պարտականությունները տարածվում են նաեւ կրոնական կազմակերպությունների հավատացյալ անդամների վրա՝ այլ քաղաքացիների հետ համահավասար:

Քաղաքացիական պարտականությունների եւ կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքերում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի եւ տվյալ կրոնական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 23. Պետության եւ կրոնական կազմակերպությունների հարաբերությունները կարգավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը, որը՝.

ա) գրանցում է կրոնական կազմակերպությունների կանոնադրությունները, միջնորդում է դատարանին օրենքը խախտող կրոնական կազմակերպությունները լուծարքի ենթարկելու առաջարկով.

բ) կրոնական կազմակերպությունների խնդրանքով աջակցում է առանձին հարցերի շուրջ պետական մարմինների հետ համաձայնության գալուն եւ անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս այդ հարցերի լուծմանը պետական մարմինների կողմից.

գ) պետության անունից որպես միջնորդ մասնակցում է Հայաստանի կրոնական կազմակերպությունների միջեւ ծագած հարցերի եւ վեճերի լուծմանը.

դ) իրականացնում է սույն օրենքով նախատեսված լիազորությունները:

Պետության եւ կրոնական կազմակերպությունների սույն օրենքով չկանոնակարգված հարաբերությունները կարգավորվում են պետության եւ համապատասխան կրոնական կազմակերպությունների վարչությունների համաձայնությամբ:

Տեղեկանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԻ
փոփոխվող հոդվածի վերաբերյալ

ՀՈԴՎԱԾ 162. ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԱՆՁԻ ԴԵՄ ՈՏՆՁԳՈՂ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ԿԱՄ ՂԵԿԱՎԱՐԵԼԸ

Այնպիսի կրոնական կամ հասարակական միավորում կազմելը կամ ղեկավարելը, որի գործունեությունը զուգորդված է անձանց առողջությանը վնաս պատճառելով կամ անձանց այլ իրավունքների դեմ ոտնձգություններով, ինչպես նաեւ անձանց իրենց քաղաքացիական պարտականություններից հրաժարվելուն դրդելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով։